

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է արտաքին մրցույթ՝ Նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.14-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Արտաքին մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.14-Ղ3-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.14-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմումները ներկայացնում են **էլեկտրոնային տարբերակով**

Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ <https://cso.gov.am/> միջոցով: Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել <https://cso.gov.am/> կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին:

Ծանոթանալով Թեստավորման մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղծիկի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում: Ստեղծվելով «Դիմել» ստեղծիկը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերնի աջ անկյունում՝ «Իմ էջը» բաժնում («Ծանուցումներ»

զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ»,

«Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցե

լ հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել» կոճակը:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացվում են քսանչորսժամյա ռեժիմով:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.14-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող թեստավորման մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» կոճակով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2

(երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի»

«Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի»

«Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված ⊕ նշանը:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝

այցելելով <https://hartak.cso.gov.am/> հղումի «ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

ՀՀ քաղաքացիները թեստավորմանը ներկայանում են անձնագրով և/կամ նույնականացման քարտով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (զինվորական գրքույկ, ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետի (ծածկագիր՝ 22-33.14-Ղ3-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում.
2. անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճենը.
3. դիպլոմ (ներ)ի լուսապատճեն (ներ)ը.
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ (եր)ի լուսապատճեն (ներ)ը.
5. արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի) լուսապատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի լուսապատճենը.
6. մեկ լուսանկար՝ 3+4 սմ չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի սեպտեմբերի 2-ի ժամը՝ 9:00-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 8-ը՝ ժամը 24:00-ը: Դիմումներն ընդունվում են քսանչորսժամյա ռեժիմով:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի հոկտեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ին, Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տերյան 89, հարկ 2-րդ, դահլիճ 2):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի հոկտեմբերի 12-ին՝ ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ, դահլիճ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի <<Հարցարան>> ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 310858 (երեք հարյուր տաս հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- Սահմանադրություն. հոդվածներ՝ 5,6,14,34,180,181,182,183,184,185,186,189 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

- «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 2,3,4, 6,8,10- 15, 18,19 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137605>

- <<Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին>> ՀՀ օրենք, հոդվածներ՝ 3,5,7,8.1,9,10,12 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144502>

- «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 1,4, 15, 16 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94473>

- <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք, հոդվածներ՝ 3,6,7,8,9,10,18,19,21,26,29,30,40,41,43 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150834>

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 5,6,19.4,35,36,37,39,41 հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142614>

- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք», հոդվածներ՝ 4, 10, 12, 19, 22, 25, 37

հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139125>

- «<Գովազդի մասին>> ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2, 11, 21, 23, 25
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148953>

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 2, 3, 4, 5, 6, 15, 20, 30, 35, 50, 52
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>

- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 21, 23, 24, 30, 37
հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120807>

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար:
Ս.Ս.Ավետիսյան, Ա. Վ. Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղզաշյան:
Երևան 2012, էջեր՝ 5, 38, 40, 54, 98,99
հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>

- «<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն,
Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70, 71, 73, 94-97, 104, 106-110, 114,
124-126,134,137,142,147-148,198-201
հղումը՝ <http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf>

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից մասնավորապես

- «Որոշումների կայացում» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/7.pdf

- «<Բարեվարքություն>> կոմպետենցիա
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

- «Աշխատակազմի կառավարում (կատարողականի կառավարում)» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

- «Խնդրի լուծումը» կոմպետենցիա,
հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, 010-511-318, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2020թ. հունիսի 15-ի N 39-Լ հրամանի

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՎՏՈՍՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ և
ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 22-33.14-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

1.3 Ենթակա և հաշվետու աշխատողներ

Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Վարչության Բաժինների պետերը:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժինների պետերից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիր

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները
Գործառույթները**

- 1) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառի պետական քաղաքականության իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագրերի և բնագավառը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.
- 2) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառին վերաբերող սոցիալ-տնտեսական, ընթացիկ, հեռանկարային և զարգացման ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքները.
- 3) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական

քաղաքականության բնագավառներում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, կնքման և Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքները.

- 4) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում միջպետական համագործակցություն, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության հետ ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում փոխհամագործակցության աշխատանքները.
- 5) ապահովում է միջազգային կազմակերպություններում Նախարարության շահերը ներկայացնելը.
- 6) ապահովում է բնագավառի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ (ծրագրային բյուջետավորման ձևաչափով) առաջարկներ և դրանց կատարումն ու արդյունքային ցուցանիշների ներկայացման աշխատանքները.
- 7) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառում միջպետական համագործակցության շրջանակներում կազմակերպվող (հանդիպումներ, տեսակոնֆերանսներ, աշխատանքային խմբերի հանդիպում, միջկառավարական հանձնաժողովների նիստեր) միջոցառումների փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքները.
- 8) ապահովում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործընթացը կանոնակարգելու առաջարկների ներկայացում.
- 9) ապահովում է բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում փոխադրման գործընթացի մասնակիցների կողմից իրականացվող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները.
- 10) ապահովում է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական քաղաքականության բնագավառում փոխգործակցության և օրենսդրության ներդաշնակեցման աշխատանքների իրականացումը.
- 11) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի մշտադիտարկումը (մոնիթորինգ).
- 12) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի ցուցանիշների վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա վիճակագրական ռեգիստրի վարման աշխատանքների կազմակերպումը.
- 13) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության, համաձայնագրի կողմ հանդիսացող պետությունների հետ թույլտվությունների փոխանակման աշխատանքների իրականացումը.
- 14) ապահովում է միջպետական, միջմարզային և ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումներին առնչվող միջոցառումների կազմակերպումը.
- 15) ապահովում է Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի մասին տվյալների գրանցամատյանի վարման աշխատանքները.
- 16) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի գործունեության կառավարումը՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ.
- 17) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում միասնական երթուղային ցանցի կազմակերպման և կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների չվացուցակների և սխեմաների մշակման աշխատանքները.
- 18) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու

գործընթացի կանոնակարգման նպատակով առաջարկությունների մշակման աշխատանքները.

- 19) ապահովում է տրանսպորտային անվտանգության ապահովման բնագավառում միջպետական և միջգերատեսչական համագործակցությունը.
- 20) ապահովում է Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախտգրաֆում) օգտագործվող քարտերի տրամադրումը.
- 21) ապահովում է քաղաքացիներին անվճար երթևեկության իրավունքի վկայականների տրամադրման աշխատանքների իրականացումը.
- 22) ապահովում է ինքնագնաց ճանապարհաշինարարական մեքենաների և մեխանիզմների, ձյունագնաց, ջրային, երկաթուղային տրանսպորտային միջոցների կադաստր վարման աշխատանքների կազմակերպումը:
- 23) ապահովում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության և երկաթուղային տրանսպորտի գործունեության, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման աշխատանքները.
- 24) ապահովում է միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների և միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների տրամադրման աշխատանքների կազմակերպումը.
- 25) ապահովում է վտանգավոր բեռներ փոխադրելու համար թույլտվությունների, չմասնատվող բեռներ փոխադրող, թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սոնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերը գերազանցող տրանսպորտային միջոցներով փոխադրումների երթուղու մեկանգամյա թույլտվության տրամադրման աշխատանքների իրականացումը.
- 26) ապահովում է մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բազայի ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.
- 27) ապահովում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության, երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզիաների, միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ, միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու, վտանգավոր բեռներ փոխադրելու համար թույլտվությունների, չմասնատվող բեռներ փոխադրող, թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սոնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերը գերազանցող տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու մեկանգամյա թույլտվության տրամադրման վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.
- 28) ապահովում է էլեկտրոնային հարթակներում տեղեկատվության տեղադրման աշխատանքները.
- 29) ապահովում է «Մեկ պատուհան» համակարգի աշխատանքների իրականացումը, տրանսպորտի ոլորտում լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման և մատուցվող ծառայությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրման աշխատանքները.
- 30) ապահովում է մատուցվող ծառայությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական տուրքերի հաշվարկման, պետական տուրքերի հետ կապված գրությունների պատրաստման, ԴԱՀԿ ներկայացնելու համար փաթեթների պատրաստման, չվճարված պետական տուրքերի գանձման համար վարչական վարույթի իրականացման և գանձումն իրականացնող լիազոր մարմնին տեղեկատվության տրամադրման աշխատանքների կատարումը.
- 31) ապահովում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների

տրամադրման աշխատանքների կազմակերպումը.

- 32) ապահովում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման աշխատանքները.
- 33) ապահովում է Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա տեղադրված գովազդային վահանակների գույքագրումը /եռամսյակային տարբերակով/և խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը լիազոր մարմին.
- 34) ապահովում է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների տրամադրման, Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման, ընթացիկ կարգով համալրման և պահպանման աշխատանքները.
- 35) ապահովում է նախարարության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացի կազմակերպման աշխատանքները.
- 36) ապահովում է ավտոմոբիլային տրանսպորտի, լիցենզիավորման և թույլտվությունների տրամադրման բնագավառներին առնչվող տեղեկատվության տրամադրումը՝ Նախարարության պաշտոնական կայքում:

Իրավունքները՝

- պահանջել ավտոմոբիլային տրանսպորտին բնագավառի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության վերաբերող առաջարկների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և այլ գրությունների պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվություն.
- ստանալ ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառներում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվություն.
- համապատասխան լիցենզավորող և մրցույթային հանձնաժողովներից պահանջելու տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման, երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզավորման և միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունների տրամադրման համար հիմքեր.
- համապատասխան մարմիններից ստանալ եզրակացություններ.
- իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու ներկայացնել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման բազայի ստեղծման համար համապատասխան փաստաթղթեր.
- իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու ներկայացնել երկաթուղային տրանսպորտի գործունեության, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության լիցենզիաների վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանների ստեղծման համար համապատասխան փաստաթղթեր.
- իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու ներկայացնել միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար թույլտվությունների, միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու համար թույլտվությունների, չմասնատվող բեռներ փոխադրող, թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ առնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող

ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերը գերազանցող տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու մեկնագամյա թույլտվության տրամադրման, վտանգավոր բեռներ փոխադրելու համար թույլտվությունների տրամադրման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

- համապատասխան աշխատակիցներից ստանալ էլեկտրոնային հարթակներում տեղադրվող տեղեկատվությունը, ծանոթանալ նյութերին.
- մատուցվող ծառայությունների համար պետական տուրքի հաշվարկման և գանձման համար համապատասխան անձանցից պահանջել ներկայացնել վճարումը հավաստող փաստաթղթեր.
- համապատասխան հանձնաժողովներից և աշխատակիցներից պահանջելու ներկայացնել գրությունների, տեղեկանքների, զեկուցագրերի պատրաստման համար նյութեր.
- համապատասխան մարմիններից և իրավաբանական անձանցից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների տրամադրման համար.
- համապատասխան մարմիններից պահանջել և ստանալ եզրակացություններ Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման համար.
- իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջել ներկայացնել թույլտվությունների տրամադրման վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնների տրամադրման, Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման վերաբերյալ.
- համապատասխան նյութերի հավաքագրում մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացի նպատակով.
- պահանջել բողոքների, դիմումների և առաջարկների սահմանված կարգով քննարկումների համար անհրաժեշտ տեղեկատվություն:

Պարտականությունները

- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների և ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական քաղաքականության բնագավառների գործունեությունը կանոնակարգող մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունները.
- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության առաջնահերթությունների (գերակայությունների) որոշումների, բնագավառին վերաբերող անհրաժեշտ բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունները.
- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառին վերաբերող սոցիալ-տնտեսական, զարգացման, հեռանկարային և ընթացիկ ծրագրերի նախագծերի, ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի պետական քաղաքականության իրականացմանն ուղղված աշխատանքները.
- կազմակերպել քննարկումներ ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական քաղաքականության բնագավառին վերաբերող սոցիալ-տնտեսական, զարգացման, հեռանկարային և ընթացիկ ծրագրերի նախագծերի մշակման համար.
- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների բնագավառի մոնիթորինգի իրականացմանն ուղղված աշխատանքները.
- ամփոփել հանրապետության տարածքում միասնական երթուղային ցանցի կազմակերպման աշխատանքների, կանոնավոր ուղևորափոխադրումների

երթուղիների չվացուցակների և սխեմաների մշակման աշխատանքները.

- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու գործընթացի կանոնակարգման նպատակով մշակված կամ ներկայացված առաջարկությունները.
- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառին վերաբերող փոխադրումների և տեխնիկական քաղաքականության մշակման նպատակով Նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության, ինչպես նաև նրանց օրենսդրական բնագավառում կատարվող փոփոխությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման աշխատանքները.
- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի փոխադրումների և տեխնիկական քաղաքականության բնագավառում այլ երկրներում տեղի ունեցող փոփոխությունների վերլուծությունների և դրանցից բխող առաջարկությունները.
- ամփոփել նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստերի նախապատրաստման և անցկացման, հանձնաժողովի եզրակացությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանների նախագծերի կազմման աշխատանքները.
- ամփոփել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հաշվետվությունները.
- ամփոփել ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառին վերաբերող տեխնիկական ակտերի ու ստանդարտների վերաբերյալ մասնագիտական առաջարկները.
- ամփոփել երկաթուղային տրանսպորտի գործունեության լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի փաթեթները.
- ստուգել չմասնատվող բեռներ փոխադրող, թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող և (կամ) մեկ սոնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերը գերազանցող տրանսպորտային միջոցներով փոխադրումների երթուղու մեկանգամյա թույլտվության համար ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը.
- ամփոփել սահմանված ժամկետներում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների բազայում համալրման փաստաթղթերի ստուգման և կատարվող փոփոխությունների վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի և անհրաժեշտ հիմնավորումների ուսումնասիրման աշխատանքները.
- ամփոփել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների գործունեությանը բարելավելու առաջարկությունների մշակման աշխատանքները.
- դատարան և ԴԱՀ ներկայացնել փաթեթներ, անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր.
- վերլուծել հարթակներում տեղադրվող տեղեկատվությունը և ներկայացնում առաջարկություններ.
- ստուգել ներկայացված հաշվետվությունները և անցկացնել համապատասխան քննարկումներ.
- ստուգել պետական տուրքի հաշվարկման և գանձման փաստաթղթերը, ուսումնասիրել չվճարված տուրքերի վերաբերյալ տեղեկատվությունը, հիմքերը և ներկայացնել գանձման համար վարչական վարույթի վարման առաջարկություն.
- ստուգել Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գովազդի տեղադրման թույլտվությունների տրամադրման համար ներկայացված փաստաթղթերի փաթեթների ամբողջականությունը, գույքագրման վերաբերյալ տեղատվությունը.

- ստուգել լիցենզավորման հանձնաժողովի նիստերին ներկայացվող նյութերը, լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթները.
- վերլուծել նախարարության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացման գործընթացի հնարավորությունները և վերահսկել նշված գործընթացում պետական լիազոր մարմինների հետ համագործակցությունը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տրանսպորտի կամ լիցենզավորման ենթակա գործունեության կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության կամ իրավունքի կամ ճարտարագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ծառայությունների մատուցում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
7. Փոփոխությունների կառավարում
8. Կոնֆլիկտների կառավարում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից դեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: